




ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԹԵԶԵՐԻ ԲԱՆԱՎՈՐ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Տ. Պարզև վրդ. Մարտիրոսյանը, 1984 թ. գերագանց ավարտելով Էջմիածնի հոգևոր ճեմարանը, Վեհափառ Հայրապետի օրհնությամբ և կարգադրությամբ ուղարկվեց Լեհիզրադի հոգևոր ակադեմիային կից ասպիրանտուրայում ուսանելու համար: Խորանալով Զատագովական Աստվածաբանության մեջ՝ թեզ պատրաստեց «Աստվածաճանաչումը ըստ քրիստոնեական ավանդության և ոչ քրիստոնեական խորհրդապաշտական ուսմունքների՝ Յոգայի, Թեոսոֆիայի և Անտրոպոսոֆիայի» թեմայով:

Թեզը գրելու նպատակն էր վեր հանել խորհրդապաշտական ուսմունքների մոլորվածությունը Աստվածաճանաչման և Շշմաբիտ Փրկության հարցերում՝ ցույց տալով քրիստոնեական վարդապետության ճշմարտացիությունն ու գերագանցությունը:

Թեզը բաղկացած է 161 մեքենագիր էջերից և ընդգրկում է քրիստոնեական Աստվածաճանաչումը, Աստվածգիտությունը, Աստվածտեսությունը և Յոգայի, Թեոսոֆիայի և Անտրոպոսոֆիայի ծագումն ու աստվածաճանաչման տեսությունը:

Ակադեմիայի հատուկ հանձնաժողովի քննարկումից հետո Պարզև վարդապետին թույլատրվեց հանդես գալու թեզի բանավոր պաշտպանությամբ, որը տեղի ունեցավ սույն թվականի հունիսի 20-ին, ներկայությամբ Լեհիզրադի և Էստոնիայի միտրոպոլիտ Ալեքսիի:

Հոգևոր ակադեմիայի հանձնաժողովի ո-

րոշումը հայտարարեց ակադեմիայի ղեկավար պրոֆ. Գունդարևը՝ նշելով, որ Պարզև վրդ. Մարտիրոսյանի թեզը արդիական է և խիստ անհրաժեշտ այսօրվա գործնական Հովվական Աստվածաբանության տեսակետից: Նշվեց նաև աշխատության լեզվական և գիտական բարձր մակարդակը: Աշխատանքը կարող է ծառայել իբրև ուսումնական ձեռնարկ: Պարզև վարդապետը հրավիրեց այդ հարցերի շուրջ մի շարք դասավանդություններ կարդալու: Որոշվեց նաև պատրաստել աշխատանքի 50 օրինակ՝ տարածելու համար ուսանական եկեղեցիներում: Առաջարկվեց այն հրատարակել Մոսկվայի Պատրիարքության «Հոգևորովակիչ տրոտի» հանդեսում:

Լեհիզրադի հոգևոր ակադեմիայի անունից այս առթիվ Վեհափառ Հայրապետին ուղարկվեց շնորհակալական և շնորհավորական հեռագիր, որտեղ արտահայտված էր նաև, որ այսպիսի երևույթները առավել ևս ամրապնդում են ոչ միայն Ս. Էջմիածնի և Լեհիզրադի հոգևոր դպրոցների, այլև երկու եկեղեցիների կապերը:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը շնորհավորում է հոգեշնորհ Պարզև վրդ. Մարտիրոսյանին՝ այս նոր ձեռքբերումի համար, հուսալով, որ այսուհետև ևս նա կշարունակի իր գիտական ուսումնասիրությունն ու հովվական գործունեությունը՝ ի փառս Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և ի շահ հայ հավատացյալ ժողովրդի:

*
*
*

Սույն թվականի մայիսի 19-ին Մոսկվայի հոգևոր ակադեմիայի արևելյան եկեղեցիների ամբիոնում աստվածաբանության թեկնածուի իր աշխատանքը պաշտպանեց Հակոբ սարկավազ Մարտիրոսյանը: Աշխատանքի թեման է՝ «Հայ Առաքելական եկեղեցու պատարագը և նրա պատմական զարգացումը»: Այն բաղկացած է 141 մեքենագիր էջերից և ընդգրկում է՝

Հայ Առաքելական եկեղեցու ծագումն ու գործունեությունը առաջին հինգ դարերում.

Հայ եկեղեցու պատարագը Ե դարում.

Հայ եկեղեցու պատարագը Զ դարի սկզբից մինչև Ժ դարի վերջը.

Հայոց պատարագը ԺԱ դարից մինչև մեր օրերը:

Հայ եկեղեցու պատմությանը զուգընթաց, հեղինակը ներկայացրել է սրբազան

պատարագի պատմական զարգացումը՝ առանց խորամուխ լինելու դավանաբանական տարբերությունների և վեճերի մեջ:

Աշխատանքի արժեքն այն է, որ Հայ եկեղեցու ծիսագիտությանը և պատմությանը հետաքրքրվող ոռու ընթերցողը իրեն հետաքրքրող հարցերի լուսաբանումը կարող է գտնել ներկայացված աշխատանքում:

Բանավոր պաշտպանությունից հետո, մայիսի 23-ին, Մոսկվայի հոգևոր ակադեմիայի հանդիսությունների դահլիճում նույն հաստատության ղեկավար Ալեքսանդր արքեպիսկոպոսը Հակոբ սարկավազ Մարտիրոսյանին հանձնեց աստվածաբանության թեկնածուի դիպլոմը:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը շնորհավորում է բարեշնորհ սարկավազին և մաղթում նոր հաջողություններ:

ԹՂԹԱԿԻՑ

